ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՍԱՐԿԱՎԱԳ ՓԱՓԱԶՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ

Հուլիսի 23-ին Մայր տաճարում հոգեհանգիստ կատարվեց Պլովդիվի հայոց ս. Գևորգ եկեղեցու ավագ սարկավագ Կարապետ Փափազյանի մահվան տարելիցի առթիվ:

Հանգուցյալը ծնվել է 1894 թվականին Ադրիանապոլսում և իր նախնական կրթությունը ստացել տեղի Արշակունյաց ազգային վարժարանում և այն ավարտել 1909 թվականին:

Մանկուց սիրել է եկեղեցին և եկեղեցական երաժշտությունը ու նվիրվել եկեղեցու ծառայությանը:

1913 թվականին փոխադրվել է Բուլղարիայի Պլովդիվ քաղաք և այդ օրվանից իր կյանքն ու գործունեությունը կապել, որպես դպիր և ապա որպես սարկավագ, ս. Գևորգ եկեղեցու ծառայությանը:

1919 թվականին նշանակվել է նույն եկեղեցու դպրապետ:

1924 թվականին ձեռնադրվել է սարկավագ, ձեռամբ տ. Ստեփանոս արքեպ. Հովակիմյանի, որն առաջնորդն էր բուլղարահայության:

Ավելի քան 60 տարիներ, որպես հայ եկեղեցու համեստ սպասավոր, անձնվիրաբար ծառայել է իր եկեղեցուն, կազմել դպրաց դասերի երգեցիկ խմբեր և ղեկավարել այն սիրով և նվիրումով: Մանավանդ անմոռանալի է նրա աշխատանքը Պլովդիվի հայոց ս. Ներսես Շնորհալի երգչախմբի կազմակերպման և ղեկավարման մեջ:

1958 թվականին Պլովդիվում նշվում է Կարապետ սրկ. Փափազյանի եկեղեցական երաժշտական ծառայության 40-ամյակը:

1964 թվականին նա արժանանում է Հայոց Հայրապետի օրհնության կոնդակին իր երկարամյա և ամբասիր ծառայության համար:

1967 թվականին ուխտի է գալիս Մայր Աթոռ ս. Էջմիածին՝ արժանանալով Հայոց Հայրապետի մասնավոր հոգածությանը և գուրգուրանքին:

Մեկ տարի առաջ նա իր աչքերը փակեց Պլովդիվում, իր սիրելի եկեղեցու հովանու տակ, հայ համայնքի գուրգուրանքի և ուշադրության մեջ:

Հարգանք նրա աշխատանքին և հիշատակին:

Թող Տերը իր հավիտենական լույսին արժանացնի Կարապետ սարկավագ Փափազյանի բարի հոգին: